

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Ք Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՐԱՐ Ա. ԹԻԻ 7.

ՖԻԷՉՆՕ, ՔԱԼ. ՇՍԲԱԹ, ՍԵՊՏ. 27, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

It Will Pay You to Advertise in "THE CITIZEN"

The Only Armenian Paper Published in the State
1033 J Street, Fresno, Cal.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—Անթ Լուիզէն Սեպտ. 22 թուակիր հետագիր մը կը ծանուցանէ թէ Ա. Հ. Քիլիան, Նախագահը Միացեալ Նահանգաց Հայ ազգային Միութեան մը որ 20,000 անդամ ունի եղեր, նամակ մը գրած է Արապիէ Գործոց Նախարար Հէյնին խնդրելով որ ի նպաստ թուրքիոյ Հայոց միջամտութիւն ընէ Կարողայի կառավարութեանց քով:

—Չամիչի Բնկերութեան ժողովը որ տեղի պիտի ունենար անցեալ Երկուշաբթի օր, անյաջող եղաւ՝ մեծամասնութիւնը ներկայ եղած չըլլալուն համար, և յետաձգուեցաւ մինչև յառաջիկայ Երկուշաբթի: Ժողովն պիտի բացուէր առաւօտեան ժամը 10ին, բայց որովհետև շատ քիչեր ներկայ էին այդ ժամուն, ժողովն յետաձգուեցաւ մինչև ժամը 2՝ կէս օրէն վերջը. այս վերջի անգամին 90 քուէ կը պակէր ժողով կըրնայ ընելու համար, ուստի որոշուեցաւ յառաջիկայ Երկուշաբթի օրուան թողուլ: Երեոյթէն և ներկայ եղող անդամներու յայտնած կարծիքէն դատելով եղած առաջարկութիւնը, որ էր իրաւունք տալ Բնկերութեան կէս միլիոն տոլար փոխ առնել, պիտի կրնայ ընդունուիլ յառաջիկայ Երկուշաբթի օր:

—Ընթերցողք կը յիշեն անշուշտ թէ Յ. Ծովիկեան կտակակատար կարգուած էր Աստուր Տէր Միքայէլեանի՝ անցեալ Յուլիս 4ին Տ. Մանուկեանի ձեռամբ սպաննուած երիտասարդի կտակին, և ընդունուած էր Բարձրագոյն Դատարանի կողմէն: Օրինաց տրամադրութեան համեմատ Տքթ. Ղազարեան և Մ. Ռըս-

տիկեան երաշխաւոր եղած էին յիշեալ Ծովիկեակի: Այժմ կերեւի թէ անհամաձայնութիւն մը կայ կտակակատարին ու երաշխաւորներուն մասնաւոր Տքթ. Ղազարեանի միջև, զի վերջինս խնդրագրով մը դիմում ըրաւ անցեալ օր Բրձ. Դատարանին և խնդրեց որ սակէ վերջ ազատ նկատուի պատասխանատուութիւնէ, վաճառի, կըսէ Տքթ. Ղազարեան իր խնդրագրին մէջ, զոչ չէ Ծովիկեանի հետեւած ուղղութեան՝ Տէր Միքայէլեանի ստացուած քննին ծախելու խնդրուն մէջ:

—Տիգրան Մանուկեանի դատը պիտի տեսնուի Հոկտեմբեր 15ին Բարձրագոյն Դատարանի առաջին բաժնին մէջ՝ Դատարար Օրթընի առջև: Կտուի թէ երկու կողմի փաստաբանք իրենց փաստերն ու ապացոյցները պատրաստ ունին Երդուեալ Դատարաններուն (ձիւրի) ներկայացնելու համար:

—Գալող շարթու տեղի կուեննայ Բարձրագոյն Դատարանի մէջ Վէլի Փլէյնինկ Միլ Բնկերութեան մէկ դատը Տքթ. Միլքոնեանի դէմ: Պահանջատիրք՝ Վահան Փիթըրս, Երեանդ Եանըզեան և Գառնիկ Նշիկեան ամիսներ առաջ շոգեշարժ մեքենայ մը կը գընեն Տօքթօրէն՝ լաւ մեքենայի մը գինը վճարելով նոյն գործիքին համար. սակայն ժամանակ վերջ կը հասկցուի թէ գործիքը կոտրած է եղեր, ու այդ պատճառաւ պահանջատիրք շատ անգամ իրենց գործը կրտախալուին դադրեցնել, և այսու դրամական մեծ կորուստի ենթարկուիլ: Ներկայ դատով առաջինք իրենց այս վնասը կը պահանջեն, զոր Տօքթօրը կը մերժէ վճարել՝ ինքզինքը պատասխանատուութենէ ազատ նկատելով այս մասին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅԲԱՐԸ

Քաղաքական Պայքարը (Քամբէյն) սկսած է Ծը-
րէզնօ գաւառի մէջ: Հանրապետականք իրենց առա-
ջին հրապարակային ժողովը ունեցան անցեալ կիրա-
կի օր Քօրթ Հազրի հասարակաց պարտիզին մէջ: **Ռազմկապտակաւորներուն** առաջին քայլը՝ պայքարին
բացումը՝ կըսկսի յառաջիկայ երեքշաբթի երեկոյ հրա-
պարակային մեծ ժողովով մը, որ տեղի պիտի ունենայ
նոյն պարտիզին մէջ՝ եթէ օգը նպատաւար ըլլայ,
իսկ եթէ ոչ՝ Սրմբրի Հօլին մէջ: Ժողովին պիտի նա-
խագահէ փաստարան ձէյնս Ա. Պըրնս. զիտաւոր խօ-
սողները պիտի բլլան Ռազմկապտակաւոր Նահանգա-
պետի ընտրելին՝ Ծրանքլին Ք. Լէյն և տեղակայի
ընտրելին՝ Լ. Տաքուէյր: Ամենէ վերջ խնդացողը ամե-
նէ բա կը խնդայ կըսեն, և կերելի թէ այս պարա-
գային մէջ նոյն առածը իր ճշմարտութիւնը ցոյց պի-
տի տայ դարձեալ: Այս մեծ ժողովին համար ութ-
սուն և հինգ փոխ-Նախագահներ ընտրուած են,
որոնք խօսողներուն հետ բեմին վրայ մտանաւոր նըս-
տարաններ պիտի գրուեն: Փոխ-Նախագահներու
կարգին մէջ կայ մէկ Հայ մը՝ Լրագրոյս խմբագիրը:
Պայքարի ժողովները պիտի շարունակուին այդ օրէ
յետոյ Գաւառիս ամեն կողմերը՝ Սենթրալէ սկսելով:

Բ. Ն. Պարսթոյ

Ընտրելիներու մէջ քիչեր կան որք Պարսթոյի չափ
իրաւունք ունին ստանալ ձայնն ու քուէն ամեն անոնց
որոց պաշտօնը եղած է երկիրը մշակել կամ իրենց
ճակտի քրտինքով օրապահակներն շինել, վասնզի այս
անձ, որոյ գեմբէն կարելի է անոր սիրտն ու հոգին
կարգաւ, մին եղած է և մին է ցոյսօր նոյն գտա-
կարգին, որմէ կը գնահատուի իրաւամբ: Պարսթոյ թէ
և Հասարակապետականաց կողմէ Քալիֆի Ռիքօրալը-
րի ընտրելին է, բայց պիտի կրնայ վայելել օգնու-
թիւնը որիչ կուտակցութեանց պատկանող այն քա-
ղաքացիներուն որոց համար տեղական ընտրութեանց
մէջ կուտակցութիւնը երկրորդական կարեւորութիւն
ունի: Պարսթոյ երկրպարծ մ'է՝ համակրելի մէկը յի-
սուն տարեկանի չափ: Այս գաւառի մէջ ապրած է 16
տարիներ, ու իր ընթացքով ցոյց տուած է իր ուղղա-
մտութիւնը՝ գործի մէջ, իր կարողութիւնը՝ փարչական
գործոց մէջ և իր բարոյական արժանիքը քաղաքացիի
մը պարտականութեանց մէջ:

Գործաւոր գտակարգը Պարսթոյի բարեկամն է,
պովհեսե գործաւորին բարեկամն ու անոր դատին
համակիրը եղած է միշտ: Պաշտօնը որուն կը ձգտի
այսօր, նոր բան մը չէ իրեն համար: Վ. Վ. Մաչընի
օրով Քալիֆի Ռիքօրալըրի առաջին օգնականն էր
երկար ժամանակ, և այդ պաշտօնավարութեամբ հա-
մակրութիւնը շահած է ժողովրդին՝ իր գործին ու պաշ-
տօնին հաւատարիմ մնալով:

Եթէ ժողովուրդը կը փափաքի այս պաշտօնին
յարմար մէկը զնեյ Քալիֆի Ռիքօրալըրի օֆիսին մէջ,
Պարսթոյ այն անձը կըրնայ ըլլալ, և փափաքելի էր
ընտրութենէ վերջ տեսնել զայն այն պաշտօնին վրայ
որուն կը ձգտի այսօր:

Թիք, Թաք, Թիք

Արեան ծովի մէջ կը լողայ վերաւոր
Մայր Հայաստան՝ զիւր սղարալ հէզ որդեք.
Չիր օգնութեան նա կըսպասէ ամեն օր,
Բայց օր ու ժամ կանցնին անդարձ՝ Թիք, Թաք, Թիք:

Ժամանակը կանցնի, ուշ է, վեր կացէք,
Հայաստանը մահու մօտ է, Հայ մարդիկ.
Ժամացոյցի խուլ բողբքին լսեցէք,
Բողբքերը կանցնին անդարձ՝ Թիք, Թաք, Թիք:

Նուիրական մեր երկրին մէջ քար ու քանդ
Տես՝ կըսպանայ թրքին սուրը անօրէն՝
Կենաց վերջի կայծն ալ մարել Հայուն անդ,
Անոր անուն ջնջել հանար աշխարհէն:

Ժամանակը կանցնի, ուշ է, վեր կացէք, ևն.

Մեծ է թէ և մեր թշնամոյ զօրութիւն,
Անոր հոգին թոյլ է սակայն. վաս է ինք.
Քաջ ըլլանք մենք, կռիւ ընենք աննկուն,
Շղթայն անոր փչրենք շախմատ՝ ազատինք:

Ժամանակը կանցնի, ուշ է, վեր կացէք, ևն.

Մեկ շքապատեր ժամանակը սրնթոյ
Մեծոց փնառել, կամ օտարէն՝ օգնութիւն.
Գիւցազնական քայլ մը պէտք է անձնաբայ.
Մեր բազուկներն են մեր միայն՝ փրկութիւն:

Ժամանակը կանցնի, ուշ է, վեր կացէք, ևն.

Կար ժամանակ որ ամենքս ալ խանդակաթ
Կը պաշտէինք զԱյն՝ երբ ազատ էր հզօր.
Բայց երբ ինկած թշնամոյ ձեռքն յուսահատ՝
Պիտ՝ շարտօրանք փրկել զայն՝ մեր Մայրն այսօր:

Ժամանակը կանցնի, ուշ է, վեր կացէք, ևն.

Լուռ մի նստիք, մի վարսնտա անտարբեր,
Դուք այդ երկրին զուակներն էք հարազատ.
Թշնամին զայն կը փրցունէ՝ քանդ աւեր,
Դուք փրկեցէք, արձակեցէք զայն ազատ:

Ժամանակը կանցնի անդարձ, վեր կացէք,
Հայ աիկինն ալ ձեզ հետ կուգայ հայ մարդիկ.
Ժամացոյցի խուլ բողբքին ուշ գրէք,
Բողբքերը կանցնին կերթան՝ Թիք, Թաք, Թիք:

Հ. Է.

Քոնսիլիքիուս

---O---
Ա,

Քոնսիլիքիուս ծնու 551 նախ քան զՔրիստոս, մեռու 497 նախ քան զՔրիստոս երբ 70 տարեկան էր. անոր մահուանէ իկեր 68 սերունդ անցած է, և դեռ կապրին իր յաջորդները նոյն գիւղին մէջ ուր ծնած էր ինքը: Ասոնք միակ ազնուազնութեանն են ամբողջ Չինաստանի կամ կայսրութեան մէջ, և արքունի գանձատան թուշակով կապրին: Ինքը սոսկ Փիլիսոփայ անունով ծանօթ է տեղացւոց, և ոչ թէ որդի Աստուծոյ են. Իր թողած աւետարանը որ ութը մեծ հատորներ կը կազմէ, իրեն ուղղուած հարցմանց պատասխաններ են. պատասխաններու բոլորն ալ նախնեաց ստացուածներով կը հաստատէ ինքը. և այդ նախնի Փիլիսոփաներու վկայութիւնները որոնցմէ քաղուածներ կընէ՝ կը հասնին կերթան մինչև երկու հազար տարի նախ քան զՔրիստոս: Օրինակով մը բաժնարենք. Երբ կը հարցունեն Փիլիսոփայէն թէ գերագանց մարդիկ ի՞նչով կը տարբերին սովորական էակներէ, Քոնսիլիքիուս կը պատասխանէ՝ «Յանկ Փիլիսոփան կըսէ թէ ամեն օր երեք կէտերու վրայ կը խորհիմ, 1. թէ ուրիշներու հետ ըրածս ստեատքի մէջ հաւատարմութեամբ չի փարսեցոյ՞. 2. թէ բարեկամացս հետ առնչութեանցս մէջ անեղ չեղոյ՞. 3. և թէ դատատախ հրահանգները լաւ ըմբռնելով գործնականին մէջ յայտ չի բերի գոնանք»: Ահա բոլորն ալ այսպէս են Քոնսիլիքիուսի փիլիսոփայութիւնները, մինչև Քոնսիլիքիուսի 1800 տարի Քրիստոսէ առաջ կապրէր: Քոնսիլիքիուսի առաւելութիւնը կը կայանար այն կէտի մէջ թէ ինքը երկրին երկու հազար տարուան փիլիսոփաներու ըսածները գիտէր և անխնայէս առնանցով կը հաստատէր իր ըսածները: Օրինակ մը ևս: Փիլիսոփան 500է աւելի առաքեալներ ունէր իւր կենդանութեան ժամանակ. ասոնք բոլորն ալ ժամանակին գիտնականները ու կրօնաւորները, այսինքն Մանասարիններն էին: Ասոնք միակերպ հարցուածներ կուզէին իրեն և նա կը պատասխանէր անձնական հեղինակութեամբ կամ նախնեաց վկայութիւններով: Այդ կարգէն է հետեւեալն որ պատասխանելով իւր աշակերտներէն մեկուն կըսէ. «Արդարեւ սէրն ու գեղեցիկը լաւ են, բայց եթէ ուշադրութիւնդ դարձունես և հաւատարմութեամբ փորձս առաքինութեան սիրոյն, ծառայես ծնողացդ, հպատակիս իշխանիդ, կեանքդ տաս բարեկամներուդ համար, խօսքերդ լինին վստահութեան արժանի, իբրև ուսանող յինիս լաւ՞ որպէսզի յարգեն գրեզ, վստահութիւն ներշնչել այլոց ինի բու գիտութեանքդ, քեզ չի հաւատարող բարեկամ չունենաս, երբ յանցանք մը գործես զայն ուրիշ անգամ չի գործել չի գաղբիս, ըստս փեհանձն, քաղաքափոր, զգտտա, հետազօտիչ, այդ իսկ է կատարեալ մարդն ինչպէս կըսէ Չը Քընկ»: (Չը Քընկ 4118 տարի առաջ ապրած է Քոնսիլիքիուսէն): Քոնսիլիքիուս իր ժողովրդի մէջ ինչպէս նաև իր գրու-

թիւնները Անգղիարէնի թարգմանողը զինքը վարպետ կը կոչէն (մասթըր), ուստի մենք ալ վարպետ պիտի անուանենք զինքը որպէսզի կարճ ու համառօտ ըսայ անունը:

Վարպետը կըսէ, «Մանաստեղծութեանց գրքին մէջ երեք հարիւր նախադասութիւններ կան որոց իմաստը սա է թէ մի ունենար անկեալ (ստորին) խորհուրդ. ևս, կըսէ Վարպետը, ստան և հինգ տարեկան եղած ժամանակս ուսման փարսած էի, երեսուն տարեկան՝ հաստատամասութեան, քառասունին տարակարգներս փարստած էին, յետեւին երկնից կամքը գիտէի, վաթսուներեք տարեկանս հըս հպատակ էին ճշմարտութիւնն լսելու և ըմբռնելու. եօթանասունին սրտիս փափաքանցը կը հետեւէի՝ ստանց արդարութիւնը սանակիս ընելու: Առեղարգ է խօսիլ այն գործին վրայ որ աւարտած է, նոյնպէս այնպիսի գործոց վրայ որոց ընթացքը արդիւել անկարելի է. անօգուտ է նաև անցելուն վրայ խօսիլ: Բարձր պաշտօն ունենալ առանց համբերատար վեհանձնութեան, պաշտամունք կատարել առանց յարգանաց, սուգ պահել առանց արտութեան, և ուսանող մը որ ճշմարտութեան սիրահարն է՝ իսկ կամայէ իւր հանդիմաներու վիճակէն, նկատի արժանի չէ: Իմաստունը առաքինութիւն կը փնտռէ, աղէտը՝ հանգստութիւն. իմաստունը՝ օրինաց հնազանդութիւն, աղէտը՝ շնորհ կուզէ. կատարեալ մարդը՝ արդարութիւն, ստորին մարդը շահ կը փնտռէ: Անոնք որ ճշմարտութիւնը կը ճանչնան չեն հաւատարիւր անոնց որք կը սիրեն զայն. իսկ անոնք որ կը սիրեն զայն չեն հաւատարիւր անոնց որ հաճոյք կըզգան ճշմարտութիւնէն»:

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՔ 'ՔԱՂԱՔԱՅԻ' Ի

---O---

Միտըլգորօ, Մասո.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթիմովի,	—	—	Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հոպքըն, Ն. ձէրդի	—	—	Հ. Մազուճեան
Ուաքէլըն, Իլլինոյ	—	—	Յ. Պոյաճեան
Պրայթըն, Մասո.	—	—	Գ. Վարդանեան
Պոսթըն, Մասո.	—	Սիրականեան և Գանիէլեան	
Սէլիմ,	—	—	Ա. Թաչճեան
Սըլիթ, Նիւ ձէրդի	—	—	Ս. Հայագործեան

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Յառաջիկայ Կիրակի, 28 Սեպտեմբեր, Տօն Տաղաւար Ա. Խաչի: Մեծաշանդէս Ա. Պատարագ ժամը 9:30ին:

Քարոզի ժամն 11. Նիւթն է «Խաչակիր Հայն»:
Երեկոյեան դաս չկայ՝ Տաղաւարիս սովիւ:

ՀԱՅ ԵՐԻՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

---O---

ձէյ և Սանթաքարս փողոցներուն անկիւնը Ամեն Կիրակի առաւ ժամը 10ին Կիրակնորեայ դպրոց և կեօթէ ետքը ժամը 3ին Հայերեն քարոզ կըսայը

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ՃէՅ Փողոց, Էքսփօզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սէնթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ

Բաժանորդակիրը կանխիկ Վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ զրամ կը զրկուին Խմբագրութեան հետեւեայ հասցէի՝

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year, \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ. ՍԵՊՏ. 27, 1902

ՔԱԼԻՖՕՐՆԻԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Գ.

Օրէնսդիր Մարմին

Այս Նահանգիս Կառավարութեան Օրէնսդիր Մարմինը, ինչպէս որ ըսինք մեր նախորդ յօդուածին մէջ կը բաղկանայ երկու ժողովներէ՝ Ծերակայա (Սինէթ) և Երեսփոխանական ժողով (Ասսամպլի), որոնց երկուքին հաւաքարար Ըսթէյթ Լէճիսէչըր անունը կը սրուի, և զորմենք պիտի անուանենք Օրէնսդիր Մարմին:

Ծերակայաը ունի քսոստուն անդամներ, իսկ Երեսփոխանութիւնը կը բաղկանայ ութսուն անդամներէ: Այս պաշտօնեաներու բոլորն ալ կընտրուին Քալիֆօրնիոյ ժողովրդեան ուղղակի քուէովն: Հոս անցողակի յիշելու է թէ Միացեալ Նահանգաց Ծերակայաի անդամներուն ընտրութեան եղանակը քիչ մը տարբեր է Նահանգայիններու ընտրութեան ձևէն: Այս առաջինը կընտրուին Նահանգներու Օրէնսդիր Մարմիններու կողմէն, և իւրաքանչիւր Նահանգ երկու Ծերակուսական կը զրկէ Ուաշինկթըն՝ հոգ չէ թէ որչափ մեծ կամ փոքր եղած բլլայ նոյն Նահանգին բնակչաց թիւը: Ընթերցողք գիտեն թերևս թէ ընտրութեան այս եղանակին դէմ ի վաղուց հետէ իրաւացի բողոքներ սկսած են բարձրանալ երկրի ամեն կողմերէն, անանկ որ սխալ մը չի պիտի ըլլայ գուշակել թէ շատ հետու չէ այն օրը երբ ժողովուրդը Նահանգներու Օրէնսդիր Մարմիններէն պիտի առնէ այս ի-

րաւունքը ու իր ազատ և ուղղակի քուէովն պիտի ընտրէ Գահնակցական Կառավարութեան Ծերակայաը որ շատ մեծ զեր կը խաղայ այս մեծ Հանրապետութեան ներքին ու արտաքին գործերուն մէջ:

Քալիֆօրնիոս Նահանգը՝ իր նահանգային Օրէնսդիր Մարմինը ընտրելու համար՝ բաժնուած է նախ 40 Ծերակուսական նահանգարածիներու (Սէնէթօրիւլ Տիսթրիքթ) որոց իւրաքանչիւրը մէկ ձերակուսական կընտրէ՝ չորս տարի պաշտօնավարելու պայմանաւ: Քալիֆօրնիոսն բաժնուած է զարձեայ 80 երեսփոխանական նահանգարածիներու (Ասսամպլի Տիսթրիքթ) ստոնց ամեն մէկը մէկ երեսփոխան կըտրէ երկու (*) տարին անգամ մը:

Այս նահանգարածանունները կըլլան Օրէնսդիր Մարմնոյ կողմէն՝ բաժանումներու բնակչաց թաւին համեմատութեամբ: Ասոնք տասը տարին անգամ մը ենթակայ են փոփոխութեան՝ եթէ բաժանումներուն բնակչաց թիւը կարևոր փոփոխութիւն մը կրած է: Բնակչաց թիւը ստուգելու համար Օրէնսդիրները կը զիմեն Միացեալ Նահանգաց կողմէ տասը տարին անգամ մը կատարուելիք ընդհանուր մարդահամարին, որուն համեմատ նահանգարածիներու թիւը փոփոխութիւն կը կրէ:

Յիշենք զաւստը գիտնալու է թէ Քալիֆօրնիոյ Ծերակուսական Նահանգարածիներու Ձերդն է, իսկ Երեսփոխանական բաժանմանց մէջ 60 և 61րդ թիւերն ունի: Գիտելի է թէ այս տարի մեր գաւառ, իբր Ձերդ Ծերակուսական Նահանգարածին պիտի ընտրէ մէկ Ծերակուսական, և իբր վաթսուն և վաթսունմէկերորդ Երեսփոխանական նահանգարածին երկու երեսփոխաններ:

Օրէնսդիր Մարմնոյ երկու ժողովներն ալ Նահանգիս մայրաքաղաքին՝ Սաքրամենթոյ մէջ կը գումարուին: Այս ժողովները կըսկսին Յունվար մէկէն յետոյ՝ առաջին Երկուշաբթի օրը, և կը շարունակուին առտաւելն 120 օր, բայց անդամները միայն 60 օրի համար միայն կրնան թօշակ ստանալ, որոց քանակութիւնն է՝ օրական ութը տար իւրաքանչիւր անդամի, իսկ ճանապարհի ծախուց համար ամեն մէկ մը զանի տասը րէնթ:

Այս ժողովներու պաշտօնը, թերևս աւելորդ է ըսել թէ սահմանուած է Քալիֆօրնիոյ Սահմանադրութեամբ: Թէ և մեր էջերը չեն ներքեր այս մասին մանրամասնութեան մտնել՝ բայց կրնանք սաշափը ըսել թէ Օրէնսդիրներու պաշտօնը զլիաւարտար կը կայանայ ընդհանուր օրէնքներ շինելու, զանոնք ի հարկին

(*)Ընտրութեանց ժամանակ այս ժողովներու բոլոր անդամները չեն փոխուիր, վասնզի այնպէս մը կարգադրուած է որ երկու տարին անգամ մը իւրաքանչիւր ժողովի անդամներուն կէսը միայն իրենց պաշտօնավարութեան շրջանը լրացուցած կըլլան ու սեպի կուստն իրենց յաջորդին, անանկ որ ամեն անգամ ժողովոց անդամներուն կէսը իրենց պաշտօնին մէջ կը մնան ու նորեկներուն հետ կը պաշտօնավարեն մէկ կամ երկու տարիներ:

փոխելու կամ բարեփոխելու մէջ: Սահմանադրութիւնը մանրամասնաբար թուած է երեսուն և երեք տարբեր պարագաներ որոց վերաբերեալ ո՛ր և է օրէնք մը հաստատելու իրաւունք տուած չէ Օրէնդիր Ժողովներուն, որպէս զի անոնց անձը սրձակ ու սղոսա չի թողուի ի վնաս երկրին ու ժողովրդեան:

Նոր օրէնք մը հաստատելու կամ օրէնք մը բնութեան համար Օրէնդիր Մարմնոյ որոշումները այն սահն միայն նշանակութիւն ունին երբ նոյն մարմնոյ երկու ժողովներն ալ միծառասանութեան քուէ-սին ընդունին զայն: Եթէ մէկ ժողովին քուէարկած խնդիրը միւսը մերժէ, հարցը իր տեղը կը մեռնի ինքնին. եթէ Չ ժողովներն ալ խնդիր մը ընդունելէ վերջ Նահանգապետը մերժէ զայն վաւերացնել, որոշումը նորէն օրէնքի կարգ չի կրնար անցնիլ, սակայն այս վերջի պարագային՝ Օրէնդիր Մարմինը իշխանութիւն ունի՝ հակառակ Նահանգապետի մերժման՝ նոյն օրէնքը հաստատել եթէ իր երկու ժողովներուն ալ անդամոց երեք չորրորդը յանձն առնեն ընդունիլ և վաւերացնել զայն:

* * * * *

Դան. — Ամեն անոնք որք տեղական կառավարութեան ձևին վերաբերեալ կամ ուրիշ օրինական հարցումներ ունին՝ կրնան զայն նամակաւ ուղղել մեզ և իրենց պատասխաններն ստանալ հրատարակաւ՝ պայմանաւ որ այդ հարց պատասխանները ընդհանրութեան համար սգափար բան մը պարունակեն:

Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

— 0 —

Անցեալ Հինգշաբթի գիշեր իւր մահկանացուն կնքեց բնիկ Տիգրանակերտցի Կարապետ Թոփրահանեան ի հասակի 64 ամաց՝ յետ երկարատև Հիւժախաի հիւանդութեան: Հանգուցեալը կը թաղու Այրի մը և հինգ զաւակներ, որք են Տֆթ. Յովհաննէս Թոփրահանեան՝ Նիւ Եորքի Ասամնարուժը, Միշրան Թոփրահանեան, Նիւ Եորք, Տֆթ. Արմենակ Թոփրահանեան՝ Քոլթընի Ասամնարուժը, Թոփմաս և Աւրակ Թոփրահանեան, Իրէզնո:

Կարապետ Թոփրահանեան իրր վեց տարիներ առաջ Տիգրանակերտէ Ամերիկայ եկաւ իր տիկնոջ և կրտսեր զաւակին հետ, ու երկու տարիի շտի Նիւ-Եորք բնակելէ յետոյ՝ Տիկին Թոփրահանեանի հետ Ծրէզնո փոխադրուեցաւ՝ այս վերջնոյ հիւանդութիւնը օգտփոխութեամբ գործանելու նպատակաւ: Հանգուցեալը քաղցրաբարոյ, ընկերական և հիւրասէր ծերունի մ'էր որ կը սիրուէր ու կը յարգուէր զինքը ճանչցող բոլոր Հայերէն: Իրր Հայր, իրր ամուսին և իրր մարդ Հանգուցեալը օրինակելի մեկը ճանչցուած էր թէ Նիւ Եորքի և թէ քաղաքիս գաղթականութեան:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի վաղը Կիրակի, կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին Ս. Երրդ. Եկեղեցւոյ մէջ և թողումը տեղի պիտի ունենայ Հայոց գերեզմանատունը:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

— 0 —

Մայր բնութիւնը գթառատ է ամենուն: Եթէ մեզ գրկէ բանէ մը կը փոխարինէ զայն ուրիշ բանով մը: Այնպէս կը թուի թէ երջանկութիւնը բաժնուած է բոլոր մարդոց հաւասարապէս: Կառապանը կամ հասարակ գործաւորը կը ննջէ այնչափ խորունկ ու հանգիստ և կ'ապրի այնչափ երկար՝ որչափ օթմանպիլով ձաբարդող ու փարթամ պարտաներու մէջ ապրող մեծատունը:

— Շատ մարդիկ կեանքերնին կը հասցունեն գիտնալու համար թէ ի՞նչ է կեանքը: Իմաստուններն անոնք են որոնք կը հաւատան թէ կեանքը կայ, և կաշխատին զայն քաղցրացնել կարելի եղածին չափով:

— Աւելորդ սրբազարդը գեղեցիկին վնաս է, սպեղին՝ աւելորդ:

— Ականջը՝ սուր, լեզուդ՝ բարդ, շատ բէ, քիչ խառ:

— Ճիւղը բանէն շատ հեռու չերթար:

— Երբեմն չարիքն ալ բարիք է:

— Թաշունը թուէն վերջը կ'ափսոսանք:

— Երկար աշխատութիւնով երկաթն տանդ կ'ըլլայ մարդը՝ մարդ:

— Թշնամիին պատիլը չկայ:

— Գուժկանը շատ սրտոյ կը վազէ, սակաւերը շատ կամաց կը քալէ:

— Եթէ անձրևանոցի մը տակ երկու հոգի պատուարուին անձրևի ժամանակ, մէկ մարդ միայն չի թրջած առն կը հասնի, որովհետև երկուքին ալ կէսը կը թրջի:

— Հաշիւ եղած է թէ Միացեալ Նահանգաց մէջ գանուող ամեն անհատ 4050 տարի հարատեթիւն ունի՝ եթէ երկրին հարատեթիւնը անոնց մէջ բաժնուլու ըլլաւք: Մեզմէ շատեր իրաւունք չունին կարծել թէ իրենց բաժինը ուրիշի մը քսակին մէջ կաշկանդուած կը մնայ:

— Անդիտան, հովանոցիդ ծայրով քիչ մնաց որ աչքս կարցունէիր:

— Մի նեղանաք, տիկին, ստիկայ իմ հովանոցս չէ. բարեկամէ մը փոխ առած էի զայն:

— Երկնից անձրևը կ'իջնայ թէ սրգարին և թէ անապարին վրայ հաւասարապէս:

— Ճշմարիտ է. բոլոր անարգարր բնականապէս սրգար մարդուն անձրևանոցը բանած կըլայ իր գլխին վրայ:

— Տասը տղարնոց մատանի մը գոյցած ըլլալու յանցանքով ամբաստանուած ես. ի՞նչ ըսելիք ունիս յանցաւոր ես թէ ոչ:

— Յանցաւոր չեմ, Տէր Դատաւոր. մեր անկիւնի Հրեայն ըսաւ թէ երկու տարեէ աւելի այդ մատանիին սաղը կը նշանակէ զբամի խոզերուն նետիլ:

Կիրակնօրեայ վարձարանի գատառուն — Թոփմաս, եթէ տղայ մը մէկ երեսից սպտակ մը զարնէ ի՞նչ կ'ընես:

Թոփմաս — Գանի՞ տարեկան տղայ մը.

Կ. Վ. Գ. — Ըսենք թէ քու տարեքից տղայ մը. Թոփմաս — Բիթը բերանը կարիւնեմ:

Մեր Յաջորդ Նախանգապետը

Պարծև. Ծ. Ք. ԼԵՅՆ

Պատկավարականաց ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ Ընտրելին պիտի խօսի Ֆրէզնոյի ժողովրդեան

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅ,

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30, 1902.

ՔՕՐԹ ՀԱՎԶ ՓԱՐԲԵՆ մէջ ելի՛ք ողբ ներէ

Եթէ ոչ ՍՐՄԱՐԻ ՀՕԼԻՆ մէջ

ՅԱՐԳ. Չ. Ա. ՊԸՐՆՍ պիտի նախագահէ ժողովին:

Ընտիր կերակրչի նախար գևա

ՍԻԹԻ ՊԵՅԲԸՐԻՆ

Ճ. Մ. Քօչըր և Փիքֆօրթ, Ճաշպանատարք

1438 ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնո, Քալ.

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ

Քաղաքացին ձեռքէ կը վաճառուի Յ ԱՆՔԻ միայն Քալիֆորնիայէ դուրս արիչ ամեն քաղաքներու մէջ: Մեր Գործակալներէն կը խնդրենք որ սակէ վերջ այս որչեալ գնով վաճառեն զայն:

—Սահման թերթերը սա այժմ մեզ վերադարձնելու պէտք չկայ. այս մասին կը գրենք սուսնձին նախ մակաւ:

—Ստակի փոխարէն նամակագրոջմ գրկելու չէ: Հաշիւները երկու ամիսը մի անգամ գրկելու է մեզ. ամեն շաբաթ դրամ գրկելու հարկ չի կայ:

Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ր Ե Ջ Ո Ի Ր Ը

ՅՐԷՋՆՈՅԻՆՆ Է

** ՓՈՐՁԵՑԷՔ ՁԱՅՆ ԵՒ ՀԱՄԱՋՈՒՅՑԷՔ: **

Չաւիչի Ընկերութեան

Վարձած Փարէնկ Հալկերը, որոնց արածնեայ են Այգիպանք իրենց չամիչները յանձնել նոյն Ընկերութեան հաշւոյն:

Արմըստի Ճ. Ք. Ընկ.	—	—	Թուարի
			Արմօնա
Արմեթրօնկ Ֆրութ Ընկ.	—	—	Ֆալլըր
Պարնի Պ. Լ.	—	—	Արմօնա
Քասըլ Պրատըրս	—	—	Ֆրէզնո
Շատաբք և Ընկ.	—	—	Ֆրէզնո
			Ֆալլըր
Տալլինկ Չ.	—	—	Արմօնա
Իկըլ Փ. Ս. Ընկ.	—	—	Ֆրէզնո
Իթըն Փրօտիւորըս Փ. Ընկ.	—	—	Ֆրէզնո
Այգըն Վէյթ Ընկ.	—	—	Սալթ Էմօրօ
Էլ Քաճօն Փ. Ընկ.	—	—	Էլ Քաճօն
Էթիկանաա Ֆրութ Ընկ.	—	—	Էթիկանաա
Ֆրէզնո Հօմ Փ. Ընկ.	—	—	Ֆրէզնո
			Սէլմա
Կրիֆին և Բաքէլի Ընկ.	—	—	Ֆրէզնո
			Տայնուպա
			Սալթանա
			Փարլի
Կէյս Ֆրութ և Բէյլին Ընկ.	—	—	Թրէյլըր
Կուկընէյթ և Ընկ.	—	—	Ֆրէզնո
Հասը, Ա. Լ. Ընկ.	—	—	Ֆրէզնո
			Սէլմա
Հանֆրա Ր. և Տ. Ֆ. Փ. Ընկ.	—	—	Հանֆրա
Ինարրոյաըն, Ճ. Պ. Ընկ.	—	—	Ֆրէզնո
			Հանֆրա
Քինկալըրի Քօօփ Փ. Ասոն.	—	—	Քինկալըրի
Լինէա Քօօփ Փ. Ասոն	—	—	Փարլիէ
Մատիսըն Քօօփ Փ. Ընկ.	—	—	Մատիսըն
Մարակա	—	—	Մարակա
Մարգարեան և Ընկ.	—	—	Ֆրէզնո
Մատիսըն և Պանըր	—	—	Այգիլին մէջ
			Սէլի
Օլիանարը Փ. Ընկ.	—	—	Օլիանարը
Փօրթըր Պրօտըրս Ընկ.	—	—	Ֆրէզնո
			Բիսպի
			Սէլմա
			Պէյքսֆիլտ
Ֆինիքս Ր. Ս. և Փ. Ընկ.	—	—	Ֆրէզնո
			Ֆալլըր
			Քինկալըրի
Բօլընպըրի Պրօս. Ընկ.	—	—	Հանֆրա
Բուս, Իրի և Հարվի	—	—	Սէլմա
Սէյըր, Ա. Լ.	—	—	Մտէրա
Սերրեան Եղբարք	—	—	Ֆրէզնո
			Թուարի
			Էլմօր
Ինիլըն Քօօփ Փ. Ասոն	—	—	Լաս Փալմաս
Տրօճ Ֆրութ Քօ.	—	—	Ֆրէզնո
			Քալիֆ. Բէյլին Կրօտըրս Ասոսիէշըն
			Ա. Լ. ՍԷՅԸՐ, Ատենապպի

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԻԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ՃԷՑ Փողոց, —Ֆիսք Պլաք— Ֆրէզնօ.
Թէլէֆօն — — — Ուայթ 794

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ որ-
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք
իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ
քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բազմաապարար ու-
րիչներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և փտահա-
ցնէք զուք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ
յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է
ստանալ ձՕՐՃ ԵՂՐԱՅՐՆԵՐԷՆ:

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

Sorushy Pashlianurli Lili.

Ֆրէզնօ և ԱՅ փողոցներու անկիւնը

Ֆ Ր Է Ջ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆ ԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏ ԵՂԻՆ
ԱՅ ԿՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՅՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

Թէլէֆօն — — — Մէյն 24

Ֆրէզնօ, ԲԱԼԻՖՕՐՆԵՍ.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը
ունիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլ-
ուր երթալ, թիքէթի համար զիմէ Սըթրըն Փըսիֆիք
ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին
համար սոմն կը վաճառէ միւնայն ընկերութիւնը: Ա-
ւելի տեղեկութեանց համար զիմի առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ թ. Ֆ. ՊՐՕՄԵՀԱՆ
Տիվիթըն Փասինճըր Լյճընթ: Սիթի Թիքէթ Լյճընթ
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ՃԷՑ Փողոց,
Նոր Փաթըրըն Պլաքին առջև.

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ

Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԱՌՔԵՐՈՒ ՀԱՆԳՍԱՐՍՆ

Հարնէս, Մարտի և Ծածկոցներ: Այս գաշտի մէջ
ամենատաժան և ընդարձակ վաճառատունը

1817—1819 Թուրքի փողոց, Փօսթ Օֆիսին դիմացը:

Ճ. Մ. Սերրեան Ճ. Պանըր, Յ. Մ. Սերրեան

Սան Ռոքիլի Վալի Լուսն Քօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարչ:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ՃԷՑ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա:
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ
անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ
ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել
քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ
ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր
գործերը կը խնդրենք:

DR. GAZARIAN DENTIST

Տրք. Յ. Ղազարեան,

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Չանս Պլաք, ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնօ, Քալ.
Կահացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գո-
հացում Յանտիորգներուն: Գիները միշտ չափաւոր:
Թէլէֆօն — — — — — Ուայթ 231

ՍԵՐՈՒՔԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն

ԹՈՒՋԻ, ԳԵՂՋԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ:

ՖՐԷՋՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹԸՐԻ

*** Ա. ՏԻԱՎՉՉԻՕ — ՏԷՐ ***

Սան Պէնիթօ փողոց, Այի մօտ: Ֆրէզնօ, Քալիֆ.

Ս Ա Ա ՇՈՒ ԱՅՁԸՐԳ

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՅՆԵՐ, ԵՒՆ.

Ամեն տեսակ Նորուզումներ կըլան փութով:

1920 Մարիփոլա Ըթրիթ, Ֆրէզնօ:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
 1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ
 Մեծաքանակ Վաճառականք Նափայի, Արճաճայի ևն.
 զիններու, տեղական և ներածեալ օղիներու:
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ
 Բիւսթիլի տպահով զից ճանչցուած ՈՒԹՐՆԻ
ՍԷՏԻՍԻՆԼ Զարեան: — Թէլէֆօն, Ուայթ 817:—

ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ ԿՈՒՉԵՆՔ
 Ամեն հայրանակ քաղաքի մէջ Շարժութիւրթ ստա-
 բաճեալ համար: Պայմանները շատ նպաստաւոր են:
 Գրել խմբագրութեան հասցէին:

Քասրի Եղբայրներ
 Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կահնկալին ըն-
 դունի Հայ այգեպաններու արտադրած պտուղներն
 և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ զո՛հ պիտի
 մնայ այս ծանօթ ստանին:

J. K. WILKINSON
Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն
 Նպարեղէններու, պտուղիք սիկարի, ծխախոտի, թէյի,
 սուրճի, պէյքիի փոխարին, ձիթախաղի ևն.
 1145 ԱՅ փողոց — Ֆրէզնօ — Թէլէֆօն Պլաք 773

Պարսիք Ըսրէյալը,
 Էլ և Ֆրէզնօ փողոցներ, Պարսիկին զիմացը
 Թէլէֆօն, մէյն 174 — — — — — Ֆրէզնօ
 Պարձա կառքեր, ճամբորդներու ձիերուն հոգատար
 բաժին: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բաց ենք:

ԹՐԷՅՉ ՓԷՅՓԸՐԻ ՀԱՄԱՐ
 ՍԻՄԷՆԹՈՎ ՊԱՏԱԾ ԳՍՄԻ ՈՒ ՀԱՐՏՈՒԷՐԻ
 ՀԱՄԱՐ ԳՆԱ ՍՌ
ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.
 1035-1044 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՈՆ
 ՖՐԷՉՆՕ, ՔԱԼ Էքսչէնջ — Թիւ 2

Չեր Ապահովագրութեան համար գիտեցէք առ
Պ. Յ. Շեփերտ և շ Ընկ.
 1123 ՃԷՑ ԸՊԹԻԹ
 Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք
 միշտ զօհացում կատանան:

Տքք. Յ. Հ. Փարսեղեան
 ՖՐԷՉՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ
 Սենեակ 46 17, Թէլէֆօն Պլաք 492, Ֆրէզնօ Քալ

ՉԵՐ ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ
Ս. Ա. ՓԻՐՍ
 ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ՔԱԼ.

ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ
 Ամէն անոնք որ կը փափաքին Վենետիկ տպուած
 որ և է գիրք ստանալ, կրնան զայն ձեռք բերել իրմ-
 բազրութեան միջոցաւ, որ նոյն Միաբանութեան գոր-
 ծակալ կարգուած է:

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն Ե Ր
 Ընտրութիւն. Նոյ. 4, 1902

Փրպիկե Ասմինըթիթիլի համար
Բ. Տ. Չիքքընտրն
 Ռամկալարական կանոնաւոր ընտրելի:

Հանրապետական կանոնաւոր ընտրելի
Բ. Ն. Պարսոյ
 Քամիթի Բիքօրարի համար

ՏԲԹ. ԱՆՃԸՍ Պ. ՔՕՎԱՆ
 ՔՕՐՕՆԸՐԻ ՀԱՄԱՐ
 Ռամկալարականներու կանոնաւոր ընտրելի:

Գաւառական Գանձապահի (Քամիթի Թրէժըրը) համար
Ս. Վ. ՄԱՐՇԸԼԼ
 Հասարակապետական կանոնաւոր ընտրելի

ԹՃՕՆ Վ. ԿԻԷՐԶԱՐՏ
 Հանրապետական Ընտրելի ՇԷՐԻՑԻ համար
 Չեր օգնութիւնը կը խնդրուի յարգանքօք:

Ընդհանուր Գանախաղի համար
Ճ. Վ. ՃՕՆՍ
 Հասարակապետականաց Ընտրելին

Թաքս Քօլէքթըրի համար
Ա. Հ. Կրիլի
 Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի.

ՃՈՐԳ Երեսօրիանական Նահանգաբաժնէն Երեսօր-
 իանի համար.
Ճ. Վ. Թրէյլըր
 Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի: